# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2301, ք. Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք, Հեռ. (+374 223) 2 37 13 , Ֆաքս (+374 223) 2 36 63, էլ.փոստ kotayk@mta.gov.am

15. 05. 2018թ. N----------------------------------------

## Շ Ն Ո Ր Հ Ա Վ Ո Ր Ա Կ Ա Ն  Ո Ւ Ղ Ե Ր Ձ

### *ԸՆՏԱՆԻՔԻ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ*

*Սիրելի՛ հայրենակիցներ*

Ջերմորեն շնորհավորում եմ Ընտանիքի օրվա առթիվ:

Ընտանիքը յուրատեսակ արժեհամակարգ է, հայ ժողովրդի պարագայում՝ ազգային ինքնատիպ արժեհամակարգ և ազգային հպարտության ուրույն դրսևորում:

Հայերիս համար ընտանիքը սրբագործված ու պաշտամունքի հասնող միջավայր է, որից սկիզբ առնող ջերմությամբ է դաստիարակվում յուրաքանչյուր սերունդ և այդ նույն ջերմությունն էլ փոխանցում է հաջորդ սերունդներին:

Ընտանիքի վեհ գաղափարը դարեր շարունակ ապացուցել է իր կարևորությունն ու առանցքային դերակատարում ունեցել պատմական ամենատարբեր հանգրվաններում:

Ամուր ընտանիքի հիմքի վրա է ձևավորվում ու զարգանում քաղաքակիրթ հասարակությունը և նպաստում պետության հզորացմանն ու առաջընթացին:

Վերստին շնորհավորելով մարդկային ջերմությամբ լեցուն այս տոնի առթիվ՝ բոլոր ընտանիքներին մաղթում եմ խաղաղություն և անսահման երջանկություն:

*Հարգանքով՝*

Կ. ԳՈՒԼՈՅԱՆ